



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

20.08.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/57

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԱՐՋԻՋԻ» ՍՊ և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների տնօրեն Է. Փոթոյանի («ԱՐՋԻՋԻ»
ՍՊԸ-ի պետական գրանցման վկայականի համար՝ 273.110.1156483 և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի
պետական գրանցման վկայականի համար՝ 273.110.1156506),

քննելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի
ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87» ծածկագրով գնանշման
հարցման ընթացակարգի շրջանակներում «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի կողմից 30.07.2021թ.
ներկայացված (02.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից
06.08.2021թ. ներկայացված (09.08.2021թ. վարույթ ընդունված) համանման բողոքը
(հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/57 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1.«ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և
պահանջը.**

«ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.07.2021թ. ներկայացված բողոքով
հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87 ծածկագրով դեղորայքի մատակարարման գնանշման հարցում, որին հայտ է ներկայացրել նաև «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ն:

02.07.2021թ-ի թիվ 2 արձանագրությունով պատվիրատուն որոշել է մեկ օրով կասեցնել նիստը և շտկման պահանջ ներկայացնել «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ին:

Մեր կազմակերպության կողմից 1 օրվա ընթացքում ներկայացվել է հավելված 1.1-ի շտկված տարբերակը:

09.07.2021թ-ի թիվ 2 արձանագրությունով պատվիրատուն հաստատել է, որ «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացվել է շտկված փաստաթղթերը:

Նույն արձանագրության 3-րդ կետով որոշել է առաջարկվող ապրանքների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին ստուգելու համար մասնակիցներից պահանջել մեկօրյա ժամկետում ներկայացնել ՀՀ-ում դեղերի պետական գրանցամատյանում գրանցված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթերը: Մեր կազմակերպության կողմից ներկայացվել է գրություն, որ այս փուլում մասնակիցը պարտավոր չէ ապացուցել դեղի գրանցված լինելու փաստը և տվյալ փաստը պատվիրատուն կարող է ստուգել ապրանքների մատակարարման ժամանակ:

21.07.2021թ-ի թիվ 5 արձանագրությունով՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության գրությունը, պատվիրատուն առանց որևիցե հիմքի մերժում է «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի օրինակի համար թիվ 59 չափաբաժինը:

Նշված չափաբաժնի մասով մեզ մերժելու պատճառով հաղթող է ճանաչել այլ մասնակցի:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 41 և 42 եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:

Փաստացի մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, ինչը պատվիրատուն հաստատել է 09.07.2021թ-ի արձանագրությունում: Իսկ մասնակցից պատվիրատուն այլ փաստաթղթերի առանձին պահանջ ներկայացնելու իրավասություն չունի:

3. Բողոք ներկայացրած անձի պահանջ

Չեղյալ համարել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87 գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Պարտավորեցնել պատվիրատուին չեղյալ ճանաչել հանձնաժողովի՝ 59-րդ չափաբաժնի մասով «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Պարտադրել պատվիրատուին 59 չափաբաժնի մասով պայմանագիր կնքել «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի հետ, որպես նվազագույն գին առաջարկող մասնակից»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.08.2021թ. ժամը 09:40-ին և 12.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել բողոքը:

2. «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.08.2021թ. ներկայացված համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ հայտարարել է ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87 ծածկագրով դեղորայքի մատակարարման գնանշման հարցում, որին հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

02.07.2021թ-ի թիվ 2 արձանագրությունով պատվիրատուն որոշել է մեկ օրով կասեցնել նիստը և շտկման պահանջ ներկայացնել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին:

Մեր կազմակերպության կողմից 1 օրվա ընթացքում ներկայացվել է հավելված 1.1-ի շտկված տարբերակը:

09.07.2021թ-ի թիվ 2 արձանագրությունով պատվիրատուն հաստատել է, որ «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացվել է շտկված փաստաթղթերը:

Նույն արձանագրության 3-րդ կետով որոշել է առաջարկվող ապրանքների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին ստուգելու համար մասնակիցներից պահանջել մեկօրյա ժամկետում ներկայացնել ՀՀ-ում դեղերի պետական գրանցամատյանում գրանցված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթերը: Մեր կազմակերպության կողմից ներկայացվել է գրություն, որ այս փուլում մասնակիցը պարտավոր չէ ապացուցել դեղի գրանցված լինելու փաստը և տվյալ փաստը պատվիրատուն կարող է ստուգել ապրանքների մատակարարման ժամանակ:

21.07.2021թ-ի թիվ 5 արձանագրությունով՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության գրությունը, պատվիրատուն առանց որևիցե հիմքի մերժում է «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ-ի օրինակի համար թիվ 11, 13, 20, 56, 57, 58 չափաբաժինները:

Նշված չափաբաժինների մասով մեզ մերժելու պատճառով հաղթող է ճանաչել այլ մասնակիցների:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 41 և 42 եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:

Փաստացի, մասնակիցը սահմանված ժամկետում չտվել է արձանագրված ինչը պատվիրատուն հաստատել է 09.07.2021թ-ի անհամապատասխանությունը, արձանագրությունում: Իսկ մասնակցից պատվիրատուն այլ փաստաթղթերի առանձին պահանջ ներկայացնելու իրավասություն չունի:

3. Բողոք ներկայացրած անձի պահանջ

Չեղյալ համարել «Վանաձորի բժշկական կենտրոն» ԵԲԸ-ի կողմից ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87 գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Պարտավորեցնել պատվիրատուին չեղյալ հանձնաժողովի որոշումը թիվ 11, 13, 20, 56, 57, 58 չափաբաժինների մասով «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին:

Պարտադրել պատվիրատուին թիվ 11, 13, 20, 56, 57, 58 չափաբաժինների մասով պայմանագիր կնքել «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ-ի հետ, որպես նվազագույն գին առաջարկող մասնակից»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել բողոքը:

3.«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87 ծածկագրով դեղերի ձեռքբերման գնման ընթացակարգ, որին հայտ են ներկայացրել թվով 14 մասնակիցներ, այդ թվում նաև, ԶԻԱՐԶԻ և ԱՐԶԻԶԻ, ՍՊ ընկերությունները:

02/07/2021թ կայացած գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստում ուսումնասիրվել են մասնակից կազմակերպությունների ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին. ինչի արդյունքում պարզ է դարձել, որ մասնակից կազմակերպությունների (այդ թվում ԶԻԱՐԶԻ, ՍՊԸ-ի) հայտերում թերի են լրացված փաստաթղթերը՝ մասնավորապես ԶԻԱՐԶԻ, ՍՊԸ և ԱՐԶԻԶԻ, ՍՊԸ մասնակիցների հայտերում հավելված 1.1-ում առաջարկվող արտադրողի

փոխարեն յուրաքանչյուր առաջարկվող ապրանքի համար նշված են առնվազն հինգ երկրների անվանումներ, նշված չէ ապրանքի մակնիշը, ինչը անհնար է դարձնում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատումը /4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ/:

Գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մեկ օրով կասեցնել նիստը և մասնակիցներին առաջարկել ներկայացնել շտկված փաստաթղթեր հետագա գնահատման համար: Մասնակից կազմակերպությունների կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթեր: Շտկված փաստաթղթեր ներկայացնելու փաստը արձանագրվել է հանձնաժողովի 09/07/2021թ գնահատման նիստում, սակայն մասնակիցների հայտերը չեն գնահատվել «բավարար» /ինչպես իր բողոքում նշում է բողոք ներկայացնող մասնակիցը/, այլ ներկայացված նոր տվյալների հիման վրա շարունակվել է հայտերի հետագա գնահատումը՝ համաձայն 04, մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի: Մասնակից կազմակերպության կողմից ներկայացված շտկված փաստաթղթում առաջարկվող ապրանքների համար ներկայացվել են առնվազն հիսուն և ավելի արտադրող կազմակերպությունների անուններ՝ բառակույտի տեսքով, ինչը՝

1. անհնարին է դարձնում հստակ որոշել առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը

2. լուրջ կասկած է առաջացնում միևնույն ապրանքի այդքան արտադրող կազմակերպություն ունենալու հանգամանքի մասին

3. և, ինչը ամենակարևորն է, նշված կողմից արտադրված ապրանքները գրանցված չեն ՀՀ պետական գրանցամատյանում /ոեեստրում/:

Հանձնաժողովի հայտերի գնահատման նիստում, «04» մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջից ելնելով, հանձնաժողովը ստուգել է ներկայացված առնվազն հիսուն և ավելի կազմակերպությունների արտադրանքի ՀՀ գրանցամատյանում /ոեեստրում/ գրանցված լինելու հանգամանքը և պարզել, յուրաքանչյուր ապրանքի համար ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններից եզակի դեպքերում միայն մեկն է գրանցված, հետևաբար ակնհայտ է դառնում, որ մասնակցի կողմից ներկայացվել են կեղծ տվյալներ, փորձ է արվել գնման ընթացակարգին ներկայանալ ՀՀ պետական գրանցամատյանում /ոեեստրում/ չգրանցված ապրանքներով:

Սրանից ակնհայտ է դառնում, որ առաջարկվող ապրանքները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ հրավերով հստակ պահանջվել է առաջարկել միայն ՀՀ պետական գրանցամատյանում /ոբեկտում/ գրանցված ապրանքներ և գնման ընթացակարգի և պայմանագրերի կատարման ընթացքում առաջնորդվել ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի թիվ 502-Ն որոշման պահանջներով:

Հանձնաժողովը որոշում է կայացրել մեկօրյա ժամկետով կասեցնել նիստը և առաջարկել մասնակից կազմակերպություններին ներկայացնել ՀՀ ում դեղերի պետական գրանցամատյանում /ոբեկտ/ գրանցված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթեր համաձայն մասնակցի հայտով ներկայացված հավելված 1.1-ի:

Սակայն «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ-ն հիմնավորող փաստաթղթերի փոխարեն ներկայացրել է պատասխան գրություն, այն մասին, որ պատավոր չէ ներկայացնել հիմնավորումներ և կարող է ներկայացնել չգրանցված դեղեր: Հետևաբար մեկօրյա ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը:

Համաձայն «04» մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետը 5-րդ ենթակետի պահանջի՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին և համաձայն ՀՀ ԱՆ-ից ստացված գրության՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն պետական միջոցների հաշվին դեղորայք ձեռք բերելիս չի կարող առաջնորդվել Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1933-Ն որոշման 1-ին կետի 2-րդ կետով սահմանված արտոնությամբ:

Հետևաբար, «Վանաձորի բժշկական կենտրոն» «ՓԲԸ-ի կողմից ՎԲԿ-ԳՀԱՊԶԲ-21/87 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բոլոր որոշումները հիմնավորված են օրենքով սահմանված պահանջներով:

1. «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ-ի բողոքը այն մասին, որ իր կողմից ներկայացվել շտկած փաստաթղթեր և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «բավարար» համարում ենք անհիմն, քանի որ գնահատող հանձնաժողովի ոչ մի արձանագրության մեջ չի նշվել, որ այն գնահատվել է «բավարար», այլ պարզապես արձանագրվել է, որ ներկայացվել են շտկված փաստաթղթեր, որոնք հիմք են հանդիսացել հետագա գնահատման համար /04» մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջ/:

2. «ԶԻԱՐՁԻ» ՍՊԸ-ի բողոքը այն մասին, որ պատավոր չէ ներկայացնել հիմնավորումներ և կարող է ներկայացնել չգրանցված դեղեր, համարում ենք անհիմն՝ հիմք ընդունելով ՀՀ ԱՆ-ից ստացված գրությունը /կցվում է/ «17» մայիսի 2016 թվականի «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ մասը, այն է՝ «Արգելվում է իրացնել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ դադարեցված (հետ կանչված), Հայաստանի Հանրապետության խախտմամբ ներմուծված դեղերը, կեղծ դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը, հետազոտվող դեղագործական արտադրանքը»:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «ԶԻԱՐՁԻ», ՍՊԸ-ի հետ 2021թ կնքված և մասամբ կատարված պայմանագրերի արդյունքում ձևավորվել է «ոչ պատշաճ մատակարարի գնահատական» կապված անընդհատ ուշացող մատակարարումների, առկա բազմաթիվ նախազգուշացնող գրությունների հետ:

Խնդրում եմ կայացնել անվերապահ որոշում, կսահմանափակի չգրանցված դեղորայքի մուտքը Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ: Տեղեկացնեմ նաև, որ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, հաշվի առնելով ՀՀ հետ քննող անձի որոշումը, պատրաստվում է նույն տնօրենի՝ Էդուարդ Փոթոյանի, կողմից ղեկավարած տարբեր կազմակերպությունների գործունեության արդյունքում առաջացրած խնդիրների մասին տեղեկացնել պատկան մարմիններին, քանի որ նման գործելակերպի արդյունքում առաջանում են ազգային անվտանգության հարցեր»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.08.2021թ. ժամը 09:40-ին և 12.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 12.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲԲԱ-ՆԳ-2021/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԲԱ-ՆԳ-2021/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502 որոշման պահանջներին ստուգելու համար ծանուցել «ՋԻԱՐՁԻ» ՍՊԸ-ին՝ 1-3-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ 13-րդ, 20-րդ, 26-րդ, 27-րդ, 34-րդ, 36-րդ, 38-40-րդ, 50-53-րդ 56-58-րդ 62-րդ, 64-րդ 66-րդ, 67-րդ և 71-րդ, իսկ «ԱՐՁԻՁԻ» ՍՊԸ-ին՝ 6-րդ, 16-րդ և 59-րդ չափաբաժինների մասով, մեկօրյա ժամկետում ներկայացնել ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում /ոեեստր/ գրանցված լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ համաձայն՝ մասնակիցների հայտով ներկայացված հավելված 1.1-ի:

7. Ի պատասխան՝ «ՋԻԱՐՁԻ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված գրությամբ մասնավորապես հայտնել է, որ այս փուլում մասնակիցը պարտավոր չէ ապացուցելու դեղի գրանցված լինելու փաստը համաձայն ՀՀ կառավարության թիվ 502-Ն առ 02.05.2013թ. որոշման հավելվածի՝ ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչների:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշման համաձայն մերժել է «ՋԻԱՐՁԻ» ՍՊԸ-ի հայտը՝ 1-3-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ 13-րդ 20-րդ 26-րդ, 27-րդ, 34-րդ, 36-րդ, 38-40-րդ, 50-53-րդ 56-58-րդ 62-րդ, 64-րդ 66-րդ, 67-րդ և 71-րդ, իսկ «ԱՐՁԻՁԻ» ՍՊԸ-ի հայտը՝ 6-րդ, 16-րդ և 59-րդ չափաբաժինների մասով:

9. «ԱՐՁԻՁԻ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները Ընթացակարգի 59-րդ չափաբաժնի մասով, այն է՝ «ԱՐՁԻՁԻ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու չէ հայտերի գնահատման փուլում պահանջելու մասնակցից որպիսի վերջինս ապացուցի իր կողմից առաջարկվող դեղի ՀՀ-ում գրանցված լինելու փաստը, ուստի նշված հիմքով «ԱՐՁԻՁԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելն իրավաչափ չէ:

10. «ՋԻԱՐՁԻ» ՍՊԸ-ն ներկայացված համանման բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները Ընթացակարգի թիվ 11, 13, 20, 56, 57, 58-րդ չափաբաժինների մասով, այն է՝ «ՋԻԱՐՁԻ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու չէ հայտերի գնահատման փուլում պահանջելու մասնակցից որպիսի վերջինս ապացուցի իր կողմից առաջարկվող դեղի ՀՀ-ում գրանցված լինելու փաստը, ուստի նշված հիմքով «ՋԻԱՐՁԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելն իրավաչափ չէ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի 30.07.2021թ. բողոքը և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի 06.08.2021թ. համանման բողոքը՝ կից փաստաթղթերով, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, հայտնում են հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած

մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Այսպես, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն իր կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87» գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ սույն գնման ընթացակարգի և պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի թիվ 502-Ն որոշման պահանջները: Մատակարարող ապրանքները պետք է գրանցված լինեն ՀՀ-ում:

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «ԱՐՋԻՋԻ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունները:

«ԱՐՋԻՋԻ» ՍՊ և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների կողմից Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, բողոքով վիճարկվող չափաբաժինների մասով ներկայացվել է վերոնշված տեսքով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.07.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ առաջարկվող ապրանքների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502 որոշման պահանջներին ստուգելու համար ծանուցել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին՝ 1-3-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 20-րդ, 26-րդ, 27-րդ, 34-րդ, 36-րդ, 38-40-րդ, 50-53-րդ 56-58-րդ 62-րդ, 64-րդ 66-րդ, 67-րդ և 71-րդ, իսկ «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ին՝ 6-րդ, 16-րդ և 59-րդ չափաբաժինների մասով, մեկօրյա ժամկետում ներկայացնել ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում /ոեեստր/ գրանցված լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ համաձայն՝ մասնակիցների հայտով ներկայացված հավելված 1.1-ի:

Ի պատասխան՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված գրությամբ մասնավորապես հայտնել է, որ այս փուլում մասնակիցը պարտավոր չի ապացուցելու դեղի գրանցված լինելու փաստը համաձայն ՀՀ կառավարության թիվ 502-Ն առ 02.05.2013թ. որոշման հավելվածի՝ ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշման համաձայն մերժել է «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը՝ 1-3-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ 13-րդ 20-րդ 26-րդ, 27-րդ, 34-րդ, 36-րդ, 38-40-րդ, 50-53-րդ 56-58-րդ 62-րդ, 64-րդ 66-րդ, 67-րդ և 71-րդ, իսկ «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի հայտը՝ 6-րդ, 16-րդ և 59-րդ չափաբաժինների մասով:

«ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները Ընթացակարգի 59-րդ չափաբաժնի մասով, այն է՝ «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու չէ հայտերի գնահատման փուլում պահանջելու մասնակցից որպիսի վերջինս ապացուցի իր կողմից առաջարկվող դեղի ՀՀ-ում գրանցված լինելու փաստը, ուստի նշված հիմքով «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելն իրավաչափ չէ:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն ներկայացված համանման բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները Ընթացակարգի թիվ 11, 13, 20, 56, 57, 58-րդ չափաբաժինների մասով, այն է՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու չէ հայտերի գնահատման փուլում պահանջելու մասնակցից որպիսի վերջինս ապացուցի իր կողմից առաջարկվող դեղի ՀՀ-ում գրանցված լինելու փաստը, ուստի նշված հիմքով «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելն իրավաչափ չէ:

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ ԳԲԲԱ-ՆԳ-2021/57 բողոքի քննության նպատակով 12.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից «ԱՐՋԻՋԻ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների տնօրեն է. Փոթոյանին պահանջ է ներկայացվել տրամադրելու բողոքով և համանման բողոքով վիճարկվող չափաբաժինների մասով Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված Հավելված 1-ով՝ սահմանված հետևյալ պահանջին՝ «Մատակարարող ապրանքները պետք է գրանցված լինեն ՀՀ-ում» բավարելու՝ այն է՝ ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում /ոեեստր/ գրանցված լինելու հանգամանքը հավաստող փաստը, համաձայն՝ «ԱՐՋԻՋԻ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների հայտով ներկայացված Հավելված 1.1-ի:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի՝ garg.llc@mail.ru էլ. հասցեից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրվել պահանջվող տեղեկատվությունը հետևյալ ձևով.

Generic name	Dosage form	Dosage strength	Manufacturer	Registered till
--------------	-------------	-----------------	--------------	-----------------

ketoprofen	solution for injection	50mg/ml; (10) ampoules 2ml	Lek Pharmaceuticals d.d., Verovskova Str. 57, 1526 Ljubljana	06.06.2024
ketoprofen	solution for i/v and i/m injection	50mg/ml; (10/2x5/) ampoules 2ml, in blister	Biosintez PJSC, Druzhby st. 4, 440033, Penza	05.09.2025
cefotaxime (cefotaxime sodium)	powder for solution for i/m and i/v injection	1000mg; (1) glass vial 10ml	Biosintez PJSC, Druzhby st. 4, 440033, Penza	09.09.2024
pentoxifylline	tablets film-coated	400mg; (20/2x10/) in blister	Sanofi India Limited, Plot No 3501,3503-15, 6310 B-14, G.I.D.C. Estate, Ankleshwar 393 003, Dist. Bharuch, Gujarat State	11.07.2023
dexamethasone (dexamethasone sodium phosphate)	solution for injection	4mg/ml; (5) ampoules 1ml, (5/1x5/) ampoules 1ml in blister	Lekhim-Kharkiv PrJSC, 36, Severyna Pototskoho str., 61115, Kharkiv region, Kharkiv	11.07.2023
calcium gluconate	solution for injection	100mg/ml; (10/2x5/) ampoules 5ml in blister and (10) ampoules 5ml	Darnitsa Pharmaceutical Firm PrJSC, 02093, Kyiv, Boryspilska Str.,13	23.03.2023
nadroparin calcium	solution for injection	2850IU AXa/0,3ml; (10) pre-filled syringes 0,3ml	Aspen Notre Dame de Bondeville, 1 rue de l'Abbaye, 76960 Notre Dame de Bondeville for Aspen Pharma Trading Limited, 3016 Lake Drive, Citywest Business Campus, Dublin 24, Ireland	17.12.2024
nadroparin calcium	solution for injection	5700IU AXa/0,6ml; (10) pre-filled syringes 0,6ml	Aspen Notre Dame de Bondeville, 1 rue de l'Abbaye, 76960 Notre Dame de Bondeville for Aspen Pharma Trading Limited, 3016 Lake Drive, Citywest Business Campus, Dublin 24, Ireland	17.12.2024

Այսպիսով՝ «Ընկերության կողմից ներկայացված վերը նշված տեղեկատվության, ինչպես նաև «ԱՐԶԻԶԻ» և «ԶԻԱՐԶԻ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, առաջարկվող ապրանքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ վերջիններս Հավելված 1.1-ով յուրաքանչյուր չափաբաժնով առաջարկվող ապրանքի համար ներկայացրել են հարյուր և ավելի արտադրող կազմակերպությունների անվանումներ, մինչդեռ՝ որպես ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում /ոեեստրում/ գրանցված լինելու հանգամանքը հավաստող տեղեկատվություն, Ընկերությունը յուրաքանչյուր չափաբաժնով առաջարկվող ապրանքի համար ներկայացրել է մեկ արտադրողի անվանմամբ գրանցված լինելու փաստը հավաստող տեղեկատվություն, այսինքն՝ մնացած արտադրողների մասով տեղեկատվություն վերջիններիս կողմից արտադրված դեղերը ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում /ոեեստրում/ գրանցված լինելու վերաբերյալ չի ներկայացվել, սակայն, համաձայն դեղերի պետական գրանցամատյանի՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցում ստացած դեղերի ռեգիստրի, որը ներառում է դեղի առևտրային և համընդհանուր անվանումները, դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը

(փաթեթավորումը), արտադրողը, արտադրողի երկիրը, ATC ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը, գրանցման հավաստագրի համարը, գրանցման ժամկետը, բացթողնման կարգը, գրանցման հավաստագրի իրավատիրոջ անվանումը և գտնվելու վայրը, պարտադիր կերպով նշվում (գրանցվում) է առաջարկվող դեղը ըստ արտադրողի, որպիսի պայմաններում արձանագրում են, որ «ԱՐՋԻՋԻ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների կողմից Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված ապրանքները՝ հարյուր և ավելի արտադրող կազմակերպությունների անվանումներով, չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից Հավելված 1-ով՝ սահմանված «Մատակարարվող ապրանքները պետք է գրանցված լինեն ՀՀ-ում» պահանջին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում են, որ գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՐՋԻՋԻ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունների հայտերը մերժելն իրավաչափ է, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վերը շարադրված փաստական հանգամանքներով պայմանավորված գտնում են, որ ներկայացված բողոքերն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի կողմից 30.07.2021թ. ներկայացված բողոքը և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի 06.08.2021թ. համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ